Ես նվագեցի մի օրհներգ:

Ռեյհո Թ., 11 տարեկան, Թահիթի, Ֆրանսիական Պոլինեզիա

Առաջին անգամ, երբ լսեցի, թե ինչպես է մեծ եղբայրս՝ Ալանը, դաշնամուր նվագում հաղորդության ժողովի ժամանակ, ես նույնպես նվագելու ցանկություն ունեցա: Դա դարձավ իմ մանկության ու պատանեկության նպատակներից մեկը՝ որևէ օրհներգ նվագել հաղորդության ժողովի ժամանակ:

Այդ ժամանակից մինչ օրս ես քեռի Քենի մոտ դաշնամուր նվագել եմ սովորում: Ամեն օր ես փորձում եմ առնվազն 30 րոպե պարապել: 10 ամսից ես կարողացա նվագել «Ջոզեֆ Սմիթի առաջին աղոթքը» օրհներգը (*Հիմներ,* հ. 14):

Այնուհետև տարածվեց COVID-19-ը: Եկեղեցու ղեկավարները չեղարկեցին կիրակնօրյա ժողովները: Նրանք ասացին, որ մենք պետք է եկեղեցին տուն տեղափոխենք: Մայրիկն ու հայրիկը յուրաքանչյուրիս մեկական հանձնարարություն տվեցին: Նրանք ինձ խնդրեցին նվագել բացման երգը, և ես նվագեցի «Ջոզեֆ Սմիթի առաջին աղոթքը»: Ես կարողացա իրականացնել հաղորդության ժողովում օրհներգ նվագելու իմ նպատակը: Ես զգացի Հոգին մեր տանը: ●

ԱՄՈՐ՝ ՇԵՅՆ ՔԵՍՏԵՐԻ